ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-15) 52-85-21

«27» 02 2025 թ.

№ ԱՍ/34.4-Ղ4-2/874-2025

«ԷԼԵԿՏՐԱՆԵՏ» ՍՊԸ-ի
տնօրեն Ա.Աբրահամյանին

Հարգելի պարոն Աբրահամյան,

Ձեզ է ուղարկվում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 26-ի «ԷԼԵԿՏՐԱՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճելու մասին» N49-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ 3 էջ:

27.02.2025

X

ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ

Ա.Սաֆարյան

Կատարող՝ Սևակ Բաբայան ☎ (015) 58-08-08 (318)

600.0049.26.02.25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

26 փետրվարի 2025 թվականի №49-Ա

«ԷԼԵԿՏՐԱՆԵՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էներգետիկայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետի համաձայն՝ գործունեության լիցենզիա ունեցող անձը պարտավոր է լիցենզիայի պայմաններին համապատասխան իրականացնել տեխնիկական (ներառյալ՝ տեխնոլոգիական կորուստների, վառելիքի տեսակարար ծախսի, սեփական կարիքների համար անհրաժեշտ էներգիայի կամ բնական գազի ծախսի և այլն) և (կամ) ֆինանսական աուդիտ՝ անկախ փորձագետների ներգրավմամբ,

բ) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի հունիսի 21-ի N206-Ա որոշմամբ «ԷԼԵԿՏՐԱՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված էլեկտրական էներգիայի մատակարարման ԼԷ №0744 լիցենզիայի պայմանների (այսուհետ՝ Լիցենզիայի պայմաններ) 19-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի իրականացնել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտ և աուդիտորական եզրակացությունն ստանալուց հետո, իսկ տարեկան հաշվետվությունը բաժնետերերի կամ մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից հաստատվելու դեպքում՝ դրանց հաստատումից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, աուդիտորական եզրակացության և աուդիտ իրականացված ֆինանսական հաշվետվությունների պատճենները ներկայացնել

Հանձնաժողով, ինչպես նաև հրապարակել իր և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am կայքում,

գ) Ընկերությունը 2024 թվականի ընթացքում Հանձնաժողով չի ներկայացրել իր 2023 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական եզրակացության և աուդիտ իրականացված ֆինանսական հաշվետվությունների պատճենները,

դ) Լիցենզիայի պայմանների 19-րդ կետով սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2025 թվականի հունվարի 9-ից Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է 2025 թվականի հունվարի 9-ի ՆՄՄ/34.4-Մ2-1/73-2025 գրությամբ,

ե) Ընկերությունը, 2025 թվականի հունվարի 27-ին Հանձնաժողով ներկայացնելով իր 2023 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական եզրակացության և աուդիտ իրականացված ֆինանսական հաշվետվությունների պատճենները, խնդրել է կարճել հարուցված վարչական վարույթը,

զ) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Լիցենզիայի պայմանների 19-րդ կետով սահմանված պահանջը, սակայն մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին Հանձնաժողովի որոշման ընդունումը վերացրել է թույլ տված խախտումը՝ Հանձնաժողով ներկայացնելով իր 2023 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական եզրակացության և աուդիտ իրականացված ֆինանսական հաշվետվությունների պատճենները, և խախտման հետևանքով չի վտանգվել և չէր կարող վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, խախտումն ուղղակիորեն չի հանգեցրել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, այլ կարգավորվող անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտման կամ լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, և առկա չէ Լիցենզիայի պայմանների 19-րդ կետով սահմանված ժամկետի խախտման կրկնակիություն, իրողություններ, որոնց պարագայում, Հանձնաժողովի գնահատմամբ, հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման,

և հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել Լիցենզիայի պայմանների 19-րդ կետով սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2025 թվականի հունվարի 9-ից Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
26 փետրվարի 2025թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՐՅԱՆ Փ. 22
0002
ԱՍ/34.4-Ղ4-2/874-2025պ/տ

ARMENIA

Հարկվող	Հարկի դրույքաչափ	Հարկի գումար
Հարկվող գումարը չի գանձվում ՀՀ հարկային օրենսգրքի 38-դ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով		

L0126800617AM

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ
RETURN

CN15

- [x] Անհայտ/ Unknown
- [ ] Տեղափոխված/ Gone away
- [ ] Թերի հասցե/ Insufficient address
- [ ] Մերժված / Refused
- [ ] Չի պահանջվել/ Unclaimed

Եռ վերադարձման ամսաթիվ / Return Date 03 04 25

«ԷԼԵԿՏՐԱՆԵՏ» ՍՊԸ
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ Ն. Բունիաթյան 14

powered by Envelope, envelope.haypost.am

YEREVAN
ARMENIA
0002
07 APR 2025
Yerevan
Erebuni


YEREVAN
ARMENIA
0026
03 MAR 2025
Yerevan
Erebuni

CN 07

Տրման նշանակման օպերատոր / Designated operator of origin

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ստացման/հանձնման/վճարման/գրանցման
ADVICE of receipt/of delivery/of payment/of entry

Առաքանու հասցեատեր/ Addressee of the item

«ԷԼԵԿՏՐԱՆԵՏ» ՍՊԸ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ Ն. Բունիաթյան 14

A.R.

Ծառայողական/
On postal service
Ծանուցագիրը վերադարձնող գրասենյակի կնիքը/
On postal service

Առաքանու բնույթը/Nature of the item

☐ Առաջնային նամակ/ Priority letter
☐ Տպագրություն/ Printed paper
☐ Ծանրոց/ Parcel
☐ Ոչ առաջնային նամակ/ Non-Priority letter

☐ Պատվիրված/Registered
☐ Վկայագրված հանձնում/ Recorded delivery
☐ Գնահատված/ Insured

Առաքանու թիվը/
No of item LO126800617AM

☐ Հասարակ դրամական փոխանցություն/ Ordinary money order

☐ Փոխանցման անդորրագիր/ Inpayment money order
☐ Վճարման անդորրագիր/ Outpayment cheque

Առաջնային/Priority
Օդային/By airmail

Վերադարձնել / Return to

Անուն կամ գրասենյակի անվանում/ Name	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Փողոց և թիվ/ Street and No	ՍԱՐՅԱՆ Փ. 22 0002
Բնակավայր և երկիր/ Locality and country	Հայաստան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ

Լրացվում է ուղարկողի կողմից/To be filled in by the receiver

Լրացվում է նշանակման վայրում/To be completed at the point of destination

Վերոնշված առաքանին պատշաճ կերպով/The item mentioned above has been duly

☐ հանձնվել է/ delivered
☐ վճարվել է/ paid
☐ գրանցվել է ընթացիկ փոստային հաշվին/ credited to giro account

Ամսաթիվ և ստորագրություն/Date and signature

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնները կարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or if the regulations of the country of destination so provide by another authorized person.

AL0126800617AM

Հավելյալ Նշում 1՝ ԱՍ/34.4-Ղ4-2/874-2025պ/տ
Հավելյալ Նշում 2՝

powered by Envelope, envelope.haypost.am

YEREVAN
0002
07 APR 2025
ARMENIA
ARMENIA
C
ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ

YEREVAN
0026
03 MAR 2025
ARMENIA
ARMENIA
C
ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ